

ՀԱՅԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ *

«Ցեղասպանություն» հասկացության ձևակերպումը առաջին անգամ տրվել է քրեական և միջազգային իրավունքի մասնագետ Ռ. Լեմկինի «Առանցքի» տերությունների կառավարումը օկուպացված Եվրոպայում» աշխատության մեջ¹: Այդ գիրքը նրան մեծ հեղինակություն բերեց, և Լեմկինը սկսեց մի քարոզարշավ, որի նպատակն էր ցեղասպանության վերաբերյալ միջազգային կոնվենցիայի ընդունումը ՄԱԿ-ում²:

Իսկ մինչ այդ՝ դեռևս 1933թ. Մադրիդում քրեական օրենսդրության ունիֆիկացիային նվիրված գիտաժողովի համար երիտասարդ իրավաբանը պատրաստել էր մի զեկույց, որում առաջարկվում էր միջազգային օրենսդրության սահմաններում դիտարկել 2 տեսակի հանցագործություն. **բարբարոսություն**, որի դրսևորումներն են կոտորածները, պոգրոմները կամ էթնիկ և կրոնական խմբերի հանդեպ տնտեսական խտրականության կիրառումը. **վանդալիզմ**, որն արտահայտվում է մշակութային և գեղարվեստական արժեքների ոչնչացման գործողություններում: Նշված զեկույցի քննարկումն այդպես էլ տեղի չունեցավ լեհական կառավարության խարդավանքների պատճառով³: Հենց այս զեկույցում, ըստ էության, առաջին անգամ քննարկման առարկա էր դառնում «մշակութային ցեղասպանություն» եզրը:

Հետագայում, երբ ՄԱԿ-ում քննարկվում էր ցեղասպանության մասին կոնվենցիան, Լեմկինը ընդհանուր տեքստի մեջ ներառել էր նաև «մշակութային ցեղասպանություն» հասկացությունը, այսինքն՝ գրքերի, մշակութային և հոգևոր արժեքների ոչնչացումը, մայրենի լեզվի օգտագործման արգելքը, հետապնդվող խմբից երեխաների ստիպողաբար փոխանցումը այլ խմբերին⁴: Մակայն, 1948թ. մարտի 3-ին ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական խորհրդի նիստում քննարկվեց կոնվենցիայի աշխատանքային տարբերակը և ձայների մեծամասնությամբ տեքստից հանվեց «մշակութային ցեղասպանություն» հասկացությունը:

* Հոդվածն ընդունվել է տպագրության 15. 02. 2010:

1 St u Lemkin R., Axis Rule in Occupide Europe, Washington, 1944.

2 Ցեղասպանության կանխարգելման և դրա համար պատժի մասին 1948թ. դեկտեմբերի 9-ի կոնվենցիան տե՛ս ՄԱԿ-ի Հայաստանյան գրասենյակի պաշտոնական կայքէջում <http://www.un.am/?laid=2&com=module&module=menu&id=60>

3 Այդ ժամանակ լեհ դիվանագետները փորձում էին Գերմանիայի հետ չհարձակման պայմանագիր կնքել և Լեհաստանի քաղաքացի Ռ. Լեմկինին արգելվեց մեկնել Մադրիդ: Նրա զեկույցը տպագրվեց լեհական իրավաբանական ամսագրերից մեկում:

4 Թուրքական որբանոցներից մեկում եղեռնից փրկված հայ երեխաների ճակատագրին և նրանց բռնի թուրքացմանն է անդրադարձել վերջերս Ռ. Ֆիսկը՝ «The Independent» պարբերականում հրապարակված իր հոդվածում: Նրա խոսքերով՝ որբանոցում ամենամեծ պատիժն էր սահմանված հայերեն խոսելու համար, քանի որ երեխաները պետք է «ներծծվեին թուրքական ռասայի ոգով»: St u Fisk R., Living proof of the Armenian Genocide, The Independent, 9 March 2010.

1948թ. դեկտեմբերի 9-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի փարիզյան նստաշրջանի ընթացքում ընդունվեց կոնվենցիայի ներկայիս տարբերակը, իսկ 1951-ից, երբ այն վավերացրին տեքստի տակ ստորագրած 20 երկրները, փաստաթուղթն ուժի մեջ մտավ:

Այնուամենայնիվ, դրանից հետո էլ բազմաթիվ մասնագետներ գտնում են, որ «ցեղասպանություն» որակումը իր մեջ պետք է ընդգրկի նաև «մշակութային ցեղասպանություն» հասկացությունը: Այսպես, անվանի հոգեբան, Թել Ավիվի համալսարանի պրոֆեսոր, Երուսաղեմի Հոլոքոսթի և ցեղասպանության ուսումնասիրման ինստիտուտի տնօրեն Իգրաել Չարնիի կարծիքով, մայրենի լեզվի օգտագործման արգելքը նույնպես կարելի է որակել որպես գենոցիդ (նա առաջարկում է «լինգվիցիդ» տերմինը)⁵: Արքանգապի համալսարանի սոցիոլոգիայի պրոֆեսոր Մեմյուել Թոթթենը, խոսելով հայոց Մեծ եղեռնի մասին, նշում է նաև հայկական մշակութային հուշարձանների հանդեպ գործադրված վանդալիզմը՝ որպես ցեղասպանության բաղկացուցիչ մաս⁶: «Մշակութային գենոցիդ» հասկացությունն ընդգրկված է մի շարք հանրագիտական հրատարակությունների մեջ: Օրինակ՝ ֆրանսիական հանրագիտական «Բիյե» բառարանը ձևակերպում է ցեղասպանությունը որպես հանցագործություն, որը ֆիզիկական բնաջնջումից բացի նպատակ ունի այս կամ այն սոցիալական կամ ռասայական խմբի քաղաքական, կրոնական, սոցիալական, մշակութային և հոգևոր ինստիտուտների ոչնչացումը⁷: Խորհրդային մեծ հանրագիտարանը այս հիմնախնդրին տալիս էր հետևյալ որակավորումը. «Ազգային-մշակութային ցեղասպանությունը արտահայտվում է այն միջոցառումներում և գործողություններում, որոնք ուղղված են որևէ ազգի (ժողովրդի) մայրենի լեզուն օգտագործելու իրավունքի դեմ, նպաստում են ազգային մշակույթի ոչնչացմանը»⁸:

Կանադայի Թագավորական ռազմական քոլեջի պրոֆեսոր Սարա Մեհարգը շրջանառության մեջ է դրել «իդենտիցիդ» (identicide) և «մշակութային կանիբալիզմ» տերմինները (համապատասխանաբար՝ ինքնության սպանություն և ուրիշի մշակութային արժեքների յուրացում)⁹:

Ժամանակակից մշակութաբանությունը դիտարկում է մշակութային ցեղասպանությունը որպես որոշակի քաղաքականություն և գործողությունների այնպիսի ամբողջականություն, որոնք նպատակ ունեն ոչնչացնել առանձին խմբի ինքնությունը՝ ոչ պարտադիր ֆիզիկապես վերացնելով այն: Ինքնության ոչնչացմանը կարելի է հասնել խմբի քաղաքական և սոցիալական ինստիտուտները վերացնելով (մշակույթ, լեզու, ազգային արժեքներ, կրոն, տնտեսական կառույցներ)¹⁰: Հենց այս համատեքստում է Փամելա դե Կոնդապան նշում, որ մշակութային ժառանգության ոչնչացումը նշանակում է ժողովրդի, որպես ամբողջականության, ինքնության վերացում: Նույնիսկ թիրախային խմբի անդամների ֆիզիկական բնաջնջումից հետո նրա թողած նյութական ժառանգությունը (պատմական հուշարձանները, հոգևոր կառույցները, գերեզմանոցները

5 St'u Charny I. W., Genocide: The Ultimate Human Rights Problem.- Genocide, Social Sciences Record 24, N 2, 1987, p. 4.

6 St'u Totten S., Genocide: A Primer for Students in Grades 8-12.- ibid, p. 9-10.

7 St'u Genocide.- Dictionnaire Encyclopedique, p. 1969.

8. "Геноцид" – БСЭ, Москва, 1971.

9 St'u Meharg S., Identicide and Cultural Cannibalism: Warfare's Appetite for Symbolic Place.- Peace Research Journal, 33:3, November, 2001, pp. 89-98.

10 St'u Genocide and Crimes Against Humanity. Ethnocide, www.eNotes.com

և այլն) շոշափելի և ներունակ լեզվատիմության աղբյուր են հաղիսանում՝ պատմական պահանջատիրության պարագայում¹¹: Մյուս կողմից մշակույթի «վերամեկնաբանումը» (մշակույթի բռնի յուրացումը մեկ այլ խմբի կողմից, պատմության վերաշարադրումը), ըստ Կոնդապայի, ոչ այլ ինչ է, քան ցեղասպանությունն իրականացրած խմբի «լեզվատիմությունն» ապահովելու փորձ:

Այսպիսով, մշակութային ցեղասպանությունը գործողությունների այնպիսի ամբողջություն է, որը նպատակ ունի արմատախիլ անել առանձին էթնիկական խմբի ինքնությունը՝ ոչնչացնելով վերջինիս քաղաքական, կրոնական, սոցիալական, մշակութային և հոգևոր ինստիտուտները: Մշակութային ցեղասպանության դրսևորումներն են՝ էթնիկական որոշակի խմբի պատմամշակութային և գեղարվեստական արժեքների ոչնչացումը, մայրենի լեզվի օգտագործման արգելքը, մշակույթի բռնի յուրացումը, պատմության խեղաթյուրումը, ինչպես նաև նրա հանդեպ իրականացված ցեղասպանության ժխտման քաղաքականությունը: Ուրեմն՝ մշակութային ցեղասպանությունը շարունակվում է որևէ ազգի զավակների ֆիզիկական բնաջնջումից հետո էլ:

Այդպես է հայերիս պարագայում, քանզի հայկական մշակույթի «սպիտակ ջարդը» շարունակվում է առայսօր: «Սպիտակ ջարդը» իրականացվում է 3 կարևոր ուղղություններով.

ա) խտրական քաղաքականություն Թուրքիայի հայ փոքրամասնության նկատմամբ,

բ) հայկական մշակութային կոթողների ոչնչացում, անտեսում կամ յուրացում,

գ) ցեղասպանության ժխտման պաշտոնական քաղաքականություն:

Անառարկելի փաստերը վկայում են, որ հայ ժողովրդի հանդեպ գործադրվող կոտորածների ու զանգվածային ջարդերի տարիներին երիտթուրքերի կառավարությունը ձգտում էր ոչնչացնել հայկական քաղաքակրթության ամեն մի նյութեղեն ապացույց: Թալեաթ փաշայի հրամանագրերից մեկում ասվում էր. «Հարկավոր է ամեն ինչ անել ոչնչացնելու համար «Հայաստան» անունն անգամ Թուրքիայում»¹²: Այս քաղաքականության տրամաբանական հետևանքն էր հայ ժողովրդի մշակույթի, արվեստի շատ արժեքների ոչնչացումը: Հայոց Մեծ եղեռնին զոհ զնացին ժողովրդի խոշոր հատվածը և նրա միտքն ու խիղճը հանդիսացող տաղանդավոր գրողներ, արվեստագետներ, մտավորականներ: Հայ մշակույթի այդ փայլուն համաստեղության մեջ էին Գրիգոր Զոհրապը, Դանիել Վարուժանը, Սիամանթոն, Ռուբեն Սևակը, Երուխանը և շատ ուրիշներ: Երիտթուրքերը ոչնչացրին, հրի մատնեցին ու մոխրակույտերի վերածեցին նաև նրանց արխիվները, որպեսզի ոչ մի հետք չմնա այդ գրողների ու բանաստեղծների հարուստ ու բովանդակալից կյանքից: Այն, ինչ հրաշքով փրկվել է և հասել մեզ, փոքր մասն է միայն նրանց հարուստ ստեղծագործական ժառանգության:

Հայ ժողովրդի ճակատագիրն են կիսել նաև ձեռագիր հուշարձանները: Տասնյակ հազարավոր հայերեն ձեռագրեր իսպառ ոչնչացել են, իրենց հետ տանելով մեր հինավուրց պատմության, գրականության, ճշգրիտ գիտությունների

11 «Սպանված մարդը մեկն է մեզանից. ոչնչացված մշակութային կոթողը մենք բոլորս ենք, կարծես չենք էլ եղել պատմության մեջ» - de Condapa P., *Destroying Heritage, Destroying Identity*, www.traumwerk.stanford.edu

12 Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов под ред. М.Г.Нерсисяна, Ереван, 1983, с. 474.

և վերջապես՝ արվեստի գոհարները:

Այժմ շատ դժվար է ճիշտ պատկերացում կազմել Եղեռնի ընթացքում ոչնչացված ձեռագրերի քանակի և նրանց գիտական արժեքի մասին, քանի որ որևէ ամփոփ տեղեկություն դրա վերաբերյալ մեզ հայտնի չէ: 1915 թվականին նախորդող տարիներին Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում գտնվող հայերեն ձեռագրերի մասին դժբախտաբար չկա և ոչ մի ընդհանուր ցուցակ: Ձեռագրերի նկարագրման, ցուցակագրման և արժևորման աշխատանքը նոր էր ձեռնարկվել 19-րդ դարի վերջին-20-րդ դարի սկզբին: Այդ պատճառով կարելի է ասել, որ միայն Վասպուրականում, որտեղից ավելի ստույգ տեղեկություններ ունենք, մեր ձեռագրական կորուստների թիվը հասնում է մի քանի հազար գրչագրի¹³: Հայ արժեքների ոչնչացման տխուր պատկերը նույնն էր՝ սկսած Տրապիզոնից մինչև Եղեսիա, Կոստանդնուպոլսից մինչև Կարին:

Հայտնի է, որ մեր մշակույթի ստեղծման, զարգացման, ինքնատիպության պահպանման գործին իր գնահատելի մասնակցությունն են բերել Հայաստանյայց եկեղեցին և նրա հոգևորականությունը: Բազմաթիվ փաստաթղթեր, վկայություններ խոսում են Եղեռնի կազմակերպիչների նպատակալաց բարբարոսական վերաբերմունքի մասին եկեղեցական շինությունների և հատկապես՝ հոգևորականների հանդեպ:

1912-1913 թթ. Օսմանյան կայսրության ներքին գործերի նախարարության հանձնարարությամբ Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքարանը կազմել և կառավարությանն էր ներկայացրել կայսրության տարածքում գտնվող հայկական վանքերի և եկեղեցիների լիակատար ցուցակը: Շատ պատմաբաններ գտնում են, որ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Թուրքիայի բոլոր հայկական վանքերի և եկեղեցիների թվով ու վիճակով թուրքական կառավարության հատուկ «հետաքրքրությունը» որոշակի կապ է ունեցել արևմտահայության ֆիզիկական բնաջնջման դիվային ծրագրերի հետ¹⁴:

1912-13 թթ. դրությամբ Կ. Պոլսի Հայոց Պատրիարքարանի կողմից կազմված ցուցակի համաձայն՝ Օսմանյան կայսրության տարածքում (չհաշված Կ. Պոլիսը), կար 2039 գործող եկեղեցի, ինչպես նաև Հայ Կաթոլիկ և Հայ Բողոքական եկեղեցիներին պատկանող գույքը: 1992 թ. դոկտոր Ռայմոն Գևորգյանը հրատարակել էր առավել ամբողջական ցուցակ, որում նշվում էին 2538 եկեղեցի, 451 վանք և 2000 դպրոց¹⁵:

Եղեռնի տարիներին շուրջ 2150-ի է հասել կողոպտված, թալանված, հրկիզված եկեղեցիների թիվը, իսկ նահատակ հոգևորականների թիվը՝ 4000 հոգուց ավելի:

Այսպիսով, իր բնօրրանում մի ամբողջ ժողովրդի նախճիրի ու բնաջնջման հետ ոչնչացվեցին նաև այդ ժողովրդի՝ հազարամյակների ընթացքում ստեղծած քաղաքակրթության բազմաթիվ և բազմատեսակ արժեքները և հուշարձանները: Այդ գործողությունների կանխամտածված ձևը և չափերը թույլ են տալիս խոսել Օսմանյան կայսրությունում հայկական քաղաքակրթության հանդեպ գործադր-

13 Տե՛ս Ս. Քոլանջյան, Հայկական կոտորածները և մեր ձեռագրական կորուստները, «Էջմիածին», Բ-Գ-Դ (փետրվար - մարտ- ապրիլ), 1965, էջ 96-107:

14 Տե՛ս Ա.Խ. Սաֆրաստյան, Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքարանի կողմից Թուրքիայի արդարադատության և դավանանքների մինիստրության ներկայացված եկեղեցիների և վանքերի ցուցակներն ու թաքրիրները (1912-1913), «Էջմիածին», Ա (հունվար), 1965, էջ 42:

15 Տե՛ս Kougoumjian D., The Destruction of Armenian Historical Monuments as a Continuation of the Turkish Policy of Genocide, in A Crime of Silence: The Armenian Genocide, London, 1985, p. 173-185.

ված մշակութային գեոնցիոյի մասին:

Հանրապետական Թուրքիան չի ընդունել և շարունակում է ժխտել Հայոց ցեղասպանության փաստը: Ավելին, ժամանակակից Թուրքիայում ցեղասպանության ժխտումը բարձրացվել է պետական քաղաքականության մակարդակի: 2000 թ. աշնանը Թուրքիայի Ազգային անվտանգության խորհրդի (ԱԱԽ) նիստում ընդունվեց որոշում՝ Հայոց ցեղասպանության հետ կապված խնդիրը համարել Թուրքիայի ազգային անվտանգությանն առնչվող խնդիր, ուստի ներկայումս ցեղասպանության ժխտման հետ կապված գործողությունները ներառվել են Թուրքիայի Ազգային անվտանգության նոր հայեցակարգի մեջ¹⁶: Այդ նպատակով ստեղծված և կառավարության կողմից օժանդակվող հատուկ կազմակերպություններ զբաղվում են հայ ժողովրդի պատմությունը խեղաթյուրող և նենգափոխող բազմաթիվ գրքերի և բրոշյուրների հրատարակմամբ և տարածմամբ, թուրքերին են վերագրվում հայերի հոգևոր և մշակութային արժեքները, նպատակալաց կերպով ոչնչացվում են հայկական ճարտարապետական հուշարձանները, խտրական վերաբերմունքի են արժանանում հայկական կրթական օջախները փոքրաթիվ թուրքահայ գաղութում: Հայ ժողովրդի, նրա պատմության և մշակույթի վրա զանգվածային այդ հարձակումը երկու գլխավոր նպատակ է հետապնդում՝ «ապացուցել», որ Արևմտյան Հայաստանը երբեք չի եղել հայերի բնօրրանը և, որ թուրքերը հայ ժողովրդի նկատմամբ չեն իրականացրել ցեղասպանություն:

Թուրքիայում հայերի տեղահանությունը շարունակվել է և հանրապետության գոյության շրջանում: Ինչպես նշվել է հետագայում այդ ժամանակ իշխող ՀԺԿ-ի փոքրամասնությունների հարցերով բյուրոյի զեկույցում, դա Անատոլիան լրիվ թուրքացնելու քաղաքականության մի մասն էր¹⁷: 2008 թ. Թուրքիայի պաշտպանության նախարար Վեջդի Գյունուլը, կարևորելով հանրապետության ձևավորման ժամանակվա սկզբունքները՝ «ազգակերտումը» և տնտեսական հիմքեր ստեղծելը, ասել է. «Այսօր, եթե Էգեյան ծովի ավազանում հույները և Թուրքիայի շատ վայրերում հայերը շարունակեին ապրել, արդյո՞ք մենք կարող էինք նույն ազգային պետությունը լինել»¹⁸:

1920-ական թվականներից Թուրքիայում սկսվել է հայկական աշխարհագրական տեղանունների վերանվանումը, իսկ 1957 թ. ստեղծվեց հատուկ կազմակերպություն, որը զբաղվում էր այդ գործով¹⁹: Աղթամարը և Անին միակ հնություններն են, որոնք հիշատակվում են զբոսաշրջիկների ուղեցույցներում, այն էլ թրքացված ձևով, առանց նշելու նրանց հայկական ծագումը: Աղթամարը դարձել է Ակդամար՝ «սպիտակ երակ», Անին՝ Անը, «հուշ», իսկ բիրիական Արարատը դարձել է Ադրըդաղ:

Հատկապես ծանր և ողբերգական է պատմական Հայաստանի ճարտարապետական հուշարձանների ճակատագիրը: 1914 թվականին Օսմանյան կայսրության տարածքում գտնվող հայկական եկեղեցական շինությունների թիվը հասնում էր շուրջ 2540-ի: 1974 թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի տվյալների համաձայն, 1915 թ.

16 Տե՛ս Гурьев А., “Красная книга”: у Турции новая концепция национальной безопасности, www.centrasia.ru

17 Տե՛ս Մելքոնյան Ռ., Հայերի նկատմամբ թուրքական պետական քաղաքականության դրսևորումների շուրջ, «Գլոբուս», 5/2009, էջ 65:

18 Մելքոնյան Ռ., Թուրքական «ազգային պետության» նախահիմքերը, «Հանրապետական», թիվ 10, 2008, էջ 10:

19 Տե՛ս Nalci A., Tarihi unutturulma yolunda bir köşetaşi: isim deęiştirme, «Agos», 22 Mayıs, 2009.

հետո մնացած 913 շինություններից 464-ը լիովին ոչնչացվել են, 252-ը փլատակների են վերածվել, 197-ը լուրջ վերականգնման կարիք են զգում: Չմայած Թուրքիայում ընդունված պատմական հուշարձանների պահպանման և վերականգնման մասին օրենքին, գրեթե ոչ մի հայկական ճարտարապետական հուշարձան չի վերականգնվել: Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցու վերականգնումը և բացումը բացառություն էր և հետապնդում էր զուտ քարոզչական նպատակ: Կարսի Առաքելոց եկեղեցին վերաբացվեց որպես մզկիթ: Անիի որոշ վերականգնողական աշխատանքներ հանձնարարվել են այնպիսի շինարարական ընկերությունների, որոնք կապված են «Գորշ գայլեր» ծայրահեղական ազգայնական կազմակերպության հետ²⁰: Նախկին Օսմանյան կայսրության, ներկայիս Թուրքիայի բոլոր վայրերում, բացառությամբ Ստամբուլի, որ ամենաաշխույժ տուրիստական կենտրոնն է և ունի կազմակերպված հայկական համայնք, հայկական հուշարձանները քանդվում են, իսկ մնացածները զրկվում են հայկական պատկանելության բնորոշիչներից (հանված խաչեր, զանգեր, ջնջված հայերեն արձանագրություններ)²¹:

Հայկական ճարտարապետական շինությունները հետևողականորեն պայթեցվում են, որպես թիրախ օգտագործվում զինավարժությունների ժամանակ, նրանց սրբատաշ քարերն օգտագործվում են որպես շինանյութ կառուցապատման ընթացքում, նրանք ծառայում են իբրև գոմ, պահեստ, նույնիսկ բանտ: Որոշ դեպքերում հայկական եկեղեցիները մզկիթների են վերածվում, կամ էլ հայտարարվում են «սելջուկյան ճարտարապետության» նմուշներ:

Հայկական եկեղեցիների ավերումները թուրք իշխանությունները հաճախ են պատճառաբանում տեղի ունեցող երկրաշարժերով: Ջորջ Հինթյանը՝ Երուսաղեմի հայկական թանգարանի խնամակալը, այս առիթով գրում էր. «Եկեղեցիների անհետանալը կարող էր վերագրել երկրաշարժերին, կողոպտիչներին, քրդերին, իսլամական ֆունդամենտալիստներին, այլմոլորակային էակներին կամ շատ ուրիշ բաների, սակայն վերջնական արդյունքը նույնն է: Տարեցտարի հայկական եկեղեցիները անհետանում են մեկը մյուսի հետևից, և դա միայն գոհացնում է Թուրքիայի իշխանություններին: Նրանք արդեն փոխել են բոլոր հայկական գյուղերի անունները Արևելյան Անատոլիայում (Արևմտյան Հայաստանում - Ա. Հ.): 2000 թվականին չի մնա ոչ մի վկայություն, որ հայերն ապրել են Թուրքիայում: Մենք կդառնանք պատմական առասպել»²²:

1983 թ. հոկտեմբերի 7-ին Թուրքիայի կառավարությունը ընդունեց օրենք, համաձայն որի արգելվում էր այն կազմակերպությունների գործունեությունը, որոնք «գովաբանում են այլ ժողովուրդներ և մասսայականացնում նրանց կրոնն ու մշակույթը»²³: Այդ օրենքը հռչակելուց հետո, 1984թ. երկու անգամ դատական պատասխանատվության է ենթարկվել Բ. Թուրլաջյանը, որը հեղինակն էր ճարտարապետ Պալյանների ընտանիքին մվիրված մի հետազոտության: Առ այսօր գործում է քրեական օրենսգրքի տխրահռչակ 301 հոդվածը, որը պատիժ է սահմանում «թուրք ազգային զգացմունքները ոտնահարելու» համար: Նշված հոդվածով մի քանի անգամ դատապարտվել է լուսահոգի Հրանտ Դինքը:

20 Տե՛ս «Республика Армения», Ер., 27 апреля, 2007:

21 Տե՛ս Դովհաննիսյան Ա., Թուրքիա. մշակութային ցեղասպանություն, Եր., 2005, տե՛ս նաև՝ Մշակութային Եղեռն, The Armenian Genocide Museum – Institute; www.raa.am

22 Dalrymple W., Armenia's Other Tragedy.- "The Independent Magazine", March 18, 1989, p. 36.

23 «Զարթոնք», Պեյրուք, 24 նոյեմբերի, 1983:

«Թուրքական տաղանդին» են մշտապես վերագրվում հայկական երաժշտության, բանահյուսության, կիրառական արվեստի, գորգարվեստի բազմաթիվ նմուշներ²⁴: Այնինչ, բոլոր հետազոտողները նշում են «թուրքական արվեստ» տերմինի պայմանականությունը, քանզի օսմանյան հուշարձանների ստեղծմանն իրենց տաղանդով և հմտությամբ նպաստ են բերել հիմնականում՝ հույն, հայ, արաբ, բուլղար և այլազգի արվեստագետներն ու արհեստավորները²⁵:

Ցեղասպանությունից հետո Թուրքիայում պահպանված հայության նկատմամբ ևս պետական քաղաքականությունը շարունակում էր մնալ խտրական: Այսօր էլ Ստամբուլի հայկական համայնքը հանդիպում է բազմաթիվ խոչընդոտների, հատկապես սեփականության ամրագրման և կրթության ոլորտներում: Մինչև 2008 թ. Համայնքային Կալվածքների (Cemaat Vakıflar) վերաբերյալ օրենքի փոփոխությունը թուրքահայության համայնքային սեփականության տնօրինման հետ կապված բազմաթիվ խոչընդոտներ էին ծագում: Ներկայումս էլ բազմաթիվ խնդիրներ պետություն-համայնք հարաբերություններում մնացել են չլուծված: Թուրքիայի Հանրապետության հիմնադրման առաջին տարում՝ 1923 թվականին, Ստամբուլում եղել է 47 հայկական դպրոց: Ներկայումս գործում են ընդամենը 18 հայկական կրթօջախներ²⁶: 1937 թ. Թուրքիայի կրթության նախարարության կողմից ընդունվեց օրենք, որը պարտավորեցնում էր ազգային փոքրամասնությունների դպրոցներում պարտադիր ունենալ թուրք փոխտնօրեն՝ աշակերտներին «թուրքական մշակույթին համապատասխան դաստիարակելու համար»²⁷: Դպրոցներում արգելված է դասավանդել Հայոց պատմություն, ուսումնասիրել պատմական թեմաներով գրված գեղարվեստական գրականության ստեղծագործություններ: Բազմաթիվ գործող հրահանգները խոչընդոտում են ծնողներին՝ երեխաներին հայկական կրթօջախներ ուղարկելուն: Օրինակ՝ հայ երեխաներին արգելում են ընդունվել հայկական դպրոց, եթե նրանք չեն բնակվում տվյալ դպրոցի շրջակայքում: Հայկական դպրոցների փակման կամ թուրքացման գործընթացը այսօր էլ շարունակվում է:

Եվրոպայի Խորհրդի Մարդու իրավունքների հանձնաժողովի հանձնակատար Թ. Համարբերգի 2009թ. գեկույցը նույնպես արձանագրել է զգալի խախտումներ Թուրքիայում փոքրամասնություններին առնչվող կրթական և մշակութային ոլորտներում:

Բացի Լոզանի պայմանագրից, Թուրքիան ստորագրել և վավերացրել է Մարդու իրավունքների միջազգային խարտիան, որի կետերից մեկը նվիրված է փոքրամասնությունների իրավունքներին: 1965թ. Թուրքիան ստորագրել է պատերազմների ժամանակ մշակութային հուշարձանների պահպանության մասին Հաագայի 1954թ. կոնվենցիան: 1969թ. ստորագրել է Մշակութային հուշարձանների պահպանության մասին միջազգային պայմանագիրը, որտեղ հստակ նշում կա նաև փոքրամասնությունների մշակութային հուշարձանների մասին: Սակայն հաշվի առնելով, որ Թուրքիան շարունակաբար խախտում կամ յուրովի է մեկնաբանում իր վրա վերցրած պարտավորությունները, Եվրոպական

24 Տե՛ս Arseven E., Türk sanatı tarihi, İstanbul, 1950; Öz T., Turkish Ceramics, Ankara, 1955; Altınay A.R., Türk mimarları, İstanbul, 1977.

25 Տե՛ս Ю. А. Миллер, Искусство Турции, Москва-Ленинград, 1965, с. 6.

26 Տե՛ս Özdoğan G., Üstel F., Karakaşlı K., Kentel F., Türkiye’de Ermeniler: Cemaat – Birey - Yurttaş, İstanbul, 2009, s. 191.

27 Ավագյան Ա., Մելքոնյան Ռ., Ստամբուլի հայ համայնքի արդի իրավիճակը, Եր., 2009, էջ 54:

խորհրդարանը 1987 թ. հունիսի 18-ին ընդունեց «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» բանաձև, որի 6-րդ կետում նշվում էր.

«Թուրքիայի կառավարությունը պետք է արդարացի վերաբերմունք ցուցաբերի հայ ժողովրդի ինքնության, լեզվի, կրոնի, մշակույթի և լուսավորության սխտեմի նկատմամբ:

Եվրախորհրդարանը եռանդուն կերպով պահանջում է, որպեսզի բարելավվի Թուրքիայում գտնվող ճարտարապետական հուշարձանների պահպանությունը:

Եվրախորհրդարանը դիմում է նաև Եվրոպական համագործակցությանը, որպեսզի վերջինս հնարավորություն գտնի իր նպաստը բերելու այդ գործին»²⁸:

Եվրախորհրդարանը այնուհետև 2 անգամ վերահաստատել է վերը նշված բանաձևը:

Համաշխարհային քաղաքակրթության թանկարժեք ֆոնդի մի մասն է կազմում հայկականը: Ահա թե ինչու հայ մշակույթի պահպանումը պետք է լինի ոչ միայն հայկական, այլ նաև միջազգային հասարակայնության խնդիրներից մեկը: Նշենք սակայն, որ մինչ այժմ չի մշակվել գործուն մեխանիզմ, որը թույլ կտար հորդորներից բացի որոշակի միջոցներ կիրառել «մշակութային ջարդ» իրականացնող երկրների հանդեպ: Շվեյցարացի անվանի իրավաբան, միջազգային իրավունքի մասնագետ Ալֆրեդ դե Չայասը, օրինակ, առաջարկում է ճշգրտումներ մտցնել 1948թ. Ցեղասպանության կոնվենցիայի տեքստի մեջ, որոնք պատիժ կսահմանեն նաև ցեղասպանության ժխտման և մշակութային ջարդի համար²⁹:

Հայոց ցեղասպանության ժխտողականությունը, որը ըստ էության «սպիտակ ջարդի» դրսևորումներից է, Թուրքիայում պետական քաղաքականություն է, ինչը «Ցեղասպանությունների և մարդկության դեմ հանցագործությունների» հանրագիտարանում բնորոշվում է իբրև «սեփական անցյալը ժխտելու՝ պե տ ո թ յ ա ն ամենաբացահայտ օրինակը»³⁰: Թուրքական ժխտողականության թերևս ամենահիմնավոր պատճառը «թուրք ազգային ինքնության կորստի» վախն է: Թուրք պատմաբան Թաներ Աքչամի պատկերավոր արտահայտությամբ՝ հանրապետական Թուրքիան ստեղծվել է սեփական քաղաքացիների դեմ (հայեր, հույներ, ասորիներ) իրագործած արյունալի ոճրագործությունների միջոցով, սակայն պաշտոնական պատմագրությունը փորձել է ջնջել այդ էջը ժողովրդի կոլեկտիվ հիշողությունից³¹:

Վերջին տարիներին՝ Եվրամիությանն անդամակցության փորձերի և տեղեկատվության ազատականացման պայմաններում, որոշ տաբուներ (քրդական հարց, ազգային փոքրամասնությունների թեմա, Հայոց Եղեռն) սկսում են նահանջ ապրել: Ինչպես նշում է Սաբանջի համալսարանի պրոֆեսոր Լեյլա Նեյզին. «Թուրքիայում կան մարդիկ, նրանց թիվը քիչ չէ, որոնք սկսել են պատմության մասին պաշտոնական թեզի հետ չհամընկնող կարծիքներ հայտնել. «Պատմության գետը» պետք է ազատ հոսի և անցյալի գաղտնիքները պետք է

28 St u Text of the European Parliament’s Resolution of June 18, 1987.- “The Armenian Question Today”, Glendale, CA, 1988.
29 St u De Zayas A., The Genocide against the Armenians 1915-1923 and the Relevance of the 1948 Genocide Convention, Brussels-Geneva, 2005.
30 Մանուկյան Ս., Թուրքական ժխտողականություն, «Հանրապետական», Եր., թիվ 4, 2009, էջ 5:
31 Տե՛ս Գովհաննիսյան Ա., Ցեղասպանության ժխտումը և էթիկան (թուրքական ազգային պետության կազմավորման որոշ հարցերի լույսի ներքո), Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, հ. 4, Եր., 2006, էջ 124-129:

բացահայտվեն»³²:

«Անցյալի գաղտնիքների բացահայտումը» սկիզբ դրեց Թուրքիայում նախկինում լռեցված՝ էթնիկ ծագման բացահայտումներին և էթնիկ արմատների փնտրտուքին: «Թաքուն» և իսլամացած հայերի խնդիրը այսօր լայնորեն քննարկվող թեմա է հենց Թուրքիայում³³:

Թուրքիայի բազմաէթնիկ կամ «մոզաիկ» երկիր լինելու հարցը հրապարակային քննարկման է դրվել անգամ իշխող կուսակցության՝ ԱԶԿ-ի նախագահ և երկրի վարչապետ Ռ.Թ. Էրդողանի կողմից, որը 2005 թ. իր ելույթներից մեկում հայտարարել է, թե իր կուսակցությունը հարգանք է տածելու ներքին (էթնիկ) ինքնությունների հանդեպ, սակայն բոլորի վերին ինքնությունը Թուրքիայի Հանրապետությունն է: Իրականում էթնիկ ինքնության կարևորագույն բնորոշիչներից մեկը պատմությունն է, որը «Ակոս»-ի ներկայիս խմբագիր Էթյեն Մահչուփյանի խոսքով՝ «անարգված է» իր երկրում և հենց պատմության ճշմարտացի լուսաբանման պատճառով զոհ դարձավ Հրանտ Դինքը: «Ինքնության ճգնաժամը» և վախճը՝ սեփական պատմության հետ առերեսվելու հանդեպ, Մահչուփյանի կարծիքով, այն գինն է, որը Թուրքիան վճարում է իր ժխտողականության դիմաց³⁴: Անվանի մշակութաբան Ռ. Բևանը թուրքական ժխտողականության (denilism) մասին գրում է. Թուրքիայի ժխտողականությունը, «պատերազմը» հայկական ճարտարապետական հուշարձանների դեմ, նրա կարծեցյալ «հաղթական» ջանքերը՝ վերաշարադրել պատմական իրողությունները, ապացույց են այն բանի, որ այդ երկիրը մնում է «Եվրոպայի հիվանդ մարդ» (The Sick Man of Europe) և շարունակում է ցեղասպանությունը՝ ժխտելով այն: Ըստ Ռ. Բևանի՝ ժխտողականությունը օժանդակվում է Արևմուտքի այն ուժերի կողմից, որոնք ցանկանում են ՆԱՏՕ-ի անդամ և Եվրամիության թեկնածու - երկիր Թուրքիային պահել որպես դաշնակից: Ժխտողականությունը ուղեկցվում է հայկական ճարտարապետության «մշակութային մաքրմամբ» (cultural cleansing)³⁵:

Շարադրված փաստերը օրինաչափ մի շղթա են կազմում և ցույց են տալիս, որ ժամանակակից Թուրքիայում շարունակվում է Հայոց պատմության ու մշակույթի դեմ ուղղված գեոնցիդը:

Ռաֆայել Լեմկինը իր անձնական պարտությունն էր համարում այն իրողությունը, որ չկարողացավ ընդգրկել «մշակութային ցեղասպանություն» եզրը 1948թ. Յեղասպանության կոնվենցիայում: Նրա խորին համոզմամբ՝ ցեղասպանությունը որպես յուրատեսակ ոճիր, չի ավարտվում ֆիզիկական սպանությամբ, այլ երբեմն շարունակվում է ժխտողականության, մշակութային ջարդի և այլ գործողությունների միջոցով: Ուստի այն հարցին, թե ե՞րբ է ավարտվում ցեղասպանությունը,³⁶ պատասխանը մեկն է՝ երբ դադարեցվում է դրա ժխտումը, և երբ հանցագործություն իրականացրած կողմը գրկվում է «ոճիրի պտուղներից» օգտվելու հնարավորությունից:

32 Tavernise S., Turkey facing identity crises, International Herald Tribune, December 2006.

33 Տե՛ս Peroomian R., And Those Who Continued Living in Turkey after 1915, Yerevan, 2008.

34 Տե՛ս Mahcupyan E., Korkunun esareti, «Agos», 24 Nisan, 2009.

35 Տե՛ս Bevan R., The Destruction of Memory: Architecture at War, Chicago, 2006, www.press.uchicago.edu

36 Տե՛ս Kouyoumjian D., When Does Genocide End? The Armenian Case, Holocaust Lecture Series Sonoma, California March, 11, 2003.

Summary

ARMENOCIDE IN THE CONTEXT OF CULTURAL GENOCIDE

Anush R. Hovhannisyan

The article is an attempt to present the demolition of Armenian culture during and after the Armenian Genocide in Turkey in the context of the conception of cultural genocide. According to R.Lemkin, genocide is not only the physical annihilation of an ethnic or religious group but also the elimination of its national culture. A number of specialists believe that the definition of genocide also includes the notion of cultural genocide. Cultural genocide is expressed in those actions and measures which are aimed at damaging the identity of the target-group and encouraging the annihilation of its ethnic culture, destructing the monuments, applying linguicide, cultural cannibalism, reinterpretation of history, denialism, etc.

The Republican Turkey has not recognized and is still trying to deny the very fact of genocide. So the long history of the efforts of the Turks to erase the fact of the crime of the Armenian genocide from memory, to destroy the Armenian cultural monuments, to discriminate the Armenian historical heritage of Western Armenia are part of a systematic policy and can be defined as cultural genocide.

The Armenian cultural heritage is a part of the world's civilization, so the concern of its preservation should be shared by the world community and must be protected by international effort.

ՄՇԱԿՆՈՒՅԹ

Բ (Ը) ԳՐԱՐԻՒՄ, ՔԻՂ 2(30) ԳՐԱՐԻՒՄ 2010

ՀԵՐ ԽԱՆՈՒԿԱԿԱՆ ԽԱՆՈՒԿ